ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով, որ Կողմերը կիսում են ավտոմոբիլային սպորտի և ճանապարհային անվտանգության ոլորտների հեռանկարային զարգացման նշանակությունը,

Ձգտելով նպաստել ավտոմոբիլային սպորտի և անվտանգության մշակույթի տարածմանը հանրության շրջանում, ինչպես նաև մարզաձևի մասսայականացման միջոցով նախապատրաստել ավտոմոբիլային սպորտի որակյալ մասնագետներ,

Կարևորելով ավտոմոբիլային սպորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացումը, ինչպես նաև դրա իրականացման համար գրավիչ պայմանների ստեղծումը,

Ընդունելով կողմերի փոխադարձ պատրաստակամությունը՝ կրթական և մարզական միջոցառումների իրականացման միջոցով համատեղ ջանքերով զարգացնել նշված ոլորտները,

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

---

1. Համագործակցության նպատակները

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

1.1. Նպաստել ավտոմոբիլային սպորտի մասսայականացմանը և նոր սերնդի մարզիկների պատրաստմանը:
1.2. Զարգացնել ճանապարհային անվտանգության և վարորդական մշակույթի մասին հանրային իրազեկությունը:
1.3. Ապահովել գիտական, կրթական և սպորտային ոլորտների արդյունավետ համատեղումը:
1.4. Ստեղծել և իրականացնել համատեղ ծրագրեր, որոնք կնպաստեն սպորտի և անվտանգության ոլորտում նորարարություններին:

---

2. Համագործակցության ուղղությունները

Սույն հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ), Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիան (այսուհետ՝ Ֆեդերացիա) և «Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիա» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) պատրաստակամ են"

2.1. պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք թույլ կտան զարգացնել ավտոմոբիլային սպորտը, դրա տարածվածությանը և մարզաձևի կարևորությանը վերաբերող ոչ միայն ուսանողության, այլև բնակչության լայն շրջանում:

2.2. փոխադարձ աջակցություն ցուցաբերել մարզական, կրթամարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում:

2.3. ուսանողների մասնակցության ակտիվության խթանման նպատակով կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ, ստեղծել մասնակցության նպաստավոր պայմաններ:

2.4. Մարզական ուղղություն

- Հիմնել ավտոմոբիլային սպորտի դասընթացներ՝ ներգրավելով Ինստիտուտի ուսանողներին:
- Կազմակերպել համատեղ մարզական միջոցառումներ, առաջնություններ և ցուցադրություններ:
- Ներգրավել փորձագետներ՝ բարձրակարգ մարզումների իրականացման համար:

2.5. Կրթական ուղղություն

- Մշակել կրթական ծրագրեր ավտոմոբիլային սպորտի և ճանապարհային անվտանգության ոլորտներում:
- Կազմակերպել ուսանողների համար վարպետության դասեր և սեմինարներ:
- Ներգրավել Ֆեդերացիայի մասնագետներին՝ ուսումնական ծրագրերում դասավանդելու համար:

2.6. Հետազոտական ուղղություն

- Իրականացնել համատեղ գիտական հետազոտություններ՝ ուղղված ավտոմոբիլային սպորտի զարգացումին և ճանապարհային անվտանգության բարելավմանը:
- Հրատարակել համատեղ գիտական նյութեր և ուսումնասիրություններ:

2.7. Հանրային իրազեկություն և քարոզարշավներ

- Կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ՝ նվիրված ճանապարհային անվտանգության և վարորդական մշակույթի կարևորության լուսաբանմանը:
- Ստեղծել և տարածել հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված տեղեկատվական նյութեր:

2.8. Նորարարական ծրագրեր

- Համագործակցել նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ:
- Մշակել թվային հարթակներ, որոնք կօգնեն ուսուցման և մարզումների օնլայն ձևաչափի զարգացմանը:

2.9. Լրացուցիչ համագործակցություն

Կողմերը երկուստեք պատրաստակամ են"

2.9.1. համագործակցել Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում:
2.9.2. համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական ծրագրերի մշակման և իրականացման շուրջ:
2.9.3. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ:
2.9.4. ներգրավել Ֆեդերացիային Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում:
2.9.5. սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի

գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համագործակցել Կողմերի տարածքների, գույքի օգտագործման շուրջ:

---

3. Կողմերի պարտավորությունները

3.1. Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիան պարտավորվում է.

- Տրամադրել ավտոմոբիլային սպորտի փորձագետներ և տեխնիկական աջակցություն:
- Ներկայացնել սեփական տարածքներ և միջոցներ համատեղ միջոցառումների կազմակերպման համար:

3.2. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը պարտավորվում է.

- Ներգրավել ուսանողներին համատեղ ծրագրերում:
- Սահմանել կրթական ծրագրեր, որոնք կներառեն ավտոմոբիլային սպորտի և անվտանգության բաղադրիչները:

---

4. Կազմակերպչական դրույթներ

4.1. Համագործակցության բոլոր միջոցառումների համար պատասխանատու կլինեն Կողմերի ներկայացուցիչները:
4.2. Կողմերը պարբերաբար կհավաքվեն համատեղ ժողովների՝ ծրագրերի առաջընթացը քննարկելու նպատակով:
4.3. Կողմերի միջև տեղեկատվության փոխանակումը կիրականացվի փոխադարձ համաձայնությամբ:

---

5. Համագործակցության սկզբունքներ

Կողմերը հուշագրով նախատեսված գործողությունները կիրականացնեն օրինականության, փոխադարձ հարգանքի, վստահության և թափանցիկության սկզբունքներով:

---

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար, այլ հիմնվում է փոխադարձ համաձայնության վրա:
6.2. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել հուշագրի գործողությունը՝ մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:
6.3. Սույն հուշագիրը կնքվում է երեք օրինակից՝ հայերեն լեզվով, և երեք օրինակներն ունեն հավասար իրավաբանական ուժ:
6.4. Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:
6.5. Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2024 թ" նոյեմբերի 27-ին:
6.6. Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ԻՆՍՏԻՏՈՒՏ	ՖԵԴԵՐԱՑԻԱ	ՀԻՄՆԱԴՐԱՄ
«Հայաստանի Ֆիզիկական Կուլտուրայի եւ Սպորտի Պետական Ինստիտուտ» Հիմնադրամ	Հայաստանի Ավտոմոբիլային Ֆեդերացիա Հասարակական Կազմակերպություն	«Հայաստանի Ավտոմոբիլային Ֆեդերացիա» Հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ, ք. Երեւան, Մարգարյան 29/3	ՀՀ, ք. Երեւան, Վերին Անտառային Փողոց 130/2
ռեկտորի ժ/պ՝ Տիգրան Սիմոնյան	նախագահ՝ Արսեն Մանուկյան	Տնօրեն՝ Արմեն Ղուկասյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.